ԿԵՐՊԱՐՎԵՍՏ 4

աշխատանքային գիրք-տետր

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԿԵՐՊԱՐՎԵՍՏ 4

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐ

Հանրակրթական ուսումնական հաստատությունների
չորրորդ դասարանի սովորողների համար

Երևան - 2026

ՀՏԴ
ԳՄԴ
«**Կերպարվեստ** 4» **աշխատանքային գիրք-տետր** / Սարգսյան Ս. Մ., Պետրոսյան Ս. Ս.;
Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն.- Եր.: Էդիթ Պրինտ, 2026. - 82 էջ:

Աշխատանքային գիրք-տետրը երաշխավորվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 13.02.2026 թվականի 219-Ա/2 հրամանով որպես ուսումնական նյութ:

Աշխատանքային գիրք-տետրը հրատարակության է երաշխավորվել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի խորհրդի կողմից:

Մասնագիտական խմբագիր՝ Մնացականյան Լ. Ա.

Հեղինակներ՝
Սարգսյան Սևադա Մուշեղի, մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր
Պետրոսյան Սյուզաննա Սամվելի

Գրախոսներ՝
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ազատյան Թ. Յու.
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Մուրադյան Ս. Վ.

Խմբագիր՝ Սարգսյան Հ. Ա.

Համակարգչային ձևավորում՝ Սարգսյան Ս. Մ.

Սույն աշխատանքային գիրք-տետրի նպատակը հանրակրթական ուսումնական հաստատությունների չորրորդ դասարանի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներին «Կերպարվեստ» առարկայի ուսումնառության ընթացքում լրացուցիչ, առավել պարզեցված և հարմարեցված ուսումնական նյութերի տրամադրումն է:

ISBN
ՀՏԴ
ԳՄԴ

© Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2026

ՄՈՒՏՔ

«Կերպարվեստ 4» աշխատանքային գիրք-տետրը նախատեսված է հանրակրթական դպրոցի չորրորդ դասարանի սովորողների համար և մշակվել է՝ կերպարվեստի դասագրքին զուգահեռ կիրառելու նպատակով: Այն ուղղված է ստեղծագործական մտածողության զարգացմանը, գույների, ձևերի և կերպարվեստի նյութերի վերաբերյալ իմացության հարստացմանը, ինչպես նաև անհատական արտահայտչական կարողությունների խթանմանը: Յուրաքանչյուր առաջադրանք ուղեկցվում է մեթոդական առաջարկություններով՝ ուսուցչի աշխատանքը կազմակերպելու և սովորողների ներգրավվածությունն ապահովելու համար:

Աշխատանքային գիրք-տետրի նպատակը սովորողների երևակայության, պատկերային մտածողության, ստեղծագործական կարողությունների և գեղարվեստական ճաշակի, զուգորդական և վերլուծական մտածողության կարողությունների զարգացումն է: Այն մշակված է այնպես, որ սովորողները կարողանան ինքնուրույն, ուսուցչի օգնությամբ, զույգերով կամ խմբով կատարել առաջադրանքները խաղային, փորձարարական և ստեղծագործական եղանակներով:

Աշխատանքային գիրք-տետրը կազմված է հանրակրթության չափորոշիչների առաջադրված խնդիրների, առարկայական ծրագրերի վերջնարդյունքների պահանջների և համապատասխան կարողունակությունների ձևավորման հիմքով:

Յուրաքանչյուր առաջադրանք ուղղված է ոչ միայն կոնկրետ տեխնիկայի յուրացմանը, այլև դիտարկման, ինքնարտահայտման, համադրելու և փոխակերպելու հմտությունների զարգացմանը:

Կերպարվեստ 4 աշխատանքային գիրք-տետրի յուրաքանչյուր էջ մի արկած է, որտեղ սովորողը գլխավոր հերոսն է: Նա կարող է պատռել, գունավորել, կտրել, պատմություն հորինել, պատկերներ ստեղծել և նույնիսկ սխալվել: Սխալվել, որովհետև ամեն բան փորձի արդյունքում է ձեռք բերվում:

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Աշխատանք գունավոր կամ հասարակ մատիտներով

- Աշխատանք ջրաներկով կամ գուաշով

- Աշխատանք մկրատով

- Աշխատանք սպունգով

- Աշխատանք սոսնձով

- Աշխատանք հավելվածի նյութերով

- Ուսումնասիրության նյութ

ՍՊԻՏԱԿ ԵՎ ՍԵՎ

Առաջադրանք 1. Կերպարվեստում գույների երանգները ստանալու նպատակով օգտագործվում են սպիտակը և սևը: Ուսումնասիրի՛ր, թե ինչ կստացվի, եթե գույներին հանդիպեն սպիտակը և սևը:

Առաջադրանք 2. Սպիտակի և սևի օգնությամբ կարելի է ստանալ ցանկացած գույնի բազմաթիվ երանգներ:

Առաջադրանք 3. Միախառնի՛ր նշված գույները և ստացի՛ր տարբեր երանգներ:

	Կարմիր +սև	Կարմիր + սպիտակ	Կարմիր + սև + սպիտակ
	Կապույտ + սև	Կպույտ + սպիտակ	Կապույտ + սև + սպիտակ
	Մանուշակագույն + սև	Մանուշակագույն + սպիտակ	Մանուշակագույն + սև + սպիտակ

Առաջադրանք 4. Քո սիրելի գույնին խառնիր սպիտակ գուաշ և գունավորի՛ր թուղթը:

Առաջադրանք 5. Քո սիրելի գույնին խառնիր սև գուաշ և գունավորի՛ր թուղթը:

Առաջադրանք 6. Կենդանական աշխարհում հանդիպում են սպիտակ և սև շատ կենդանիներ:
Ո՞ր կենդանիներին ես ճանաչում, անվանի՛ր և ցո՛ւյց տուր:





Առաջադրանք 7. Աղավնիների շուրջը գունավորի՛ր կապույտ գույնի տարբեր երանգներով:
Կարդա ներքևում գրված տեղեկությունն աղավնիների մասին:

Աղավնիները սպիտակ թռչուններ են, որոնք հաճախ համարվում են խաղաղության խորհրդանիշ: Նրանք ունեն փափուկ փետուրներ, փոքր կտուց և սիրում են թռչել երկնքում: Աղավնիները հաճախ ապրում են այգիներում կամ քաղաքներում և սիրում են մարդկանց մոտ լինել:

Առաջադրանք 8. Սև մատիտով «գունավորի՛ր» կատուն՝ նրա ծավալներն արտահայտելով սևի տարբեր երանգներով:



Առաջադրանք 9. Թղթի կենտրոնում փակցրու սպիտակ կատուն (Հավելված 1):
Ի՞նչ գիտես կատուների մասին, պատմի՛ր:

Առաջադրանք 10. Ուսումնասիրի՛ր գծերի տեսակները (գծապատում):



Հիմնական



Լրացուցիչ



Ազատ







Առաջադրանք 11. Մատիտով գծապատի՛ր մրգերը՝ յուրաքանչյուրում օգտագործելով գծապատման 1-ից ավելի տեսակներ:





Առաջադրանք 12. Կերպարվեստում սպիտակի և սևի միջոցով հնարավոր է պատկերել առարկաների ծավալները, լույսերն ու ստվերները. դա կոչվում է գծանկար:





Առաջադրանք 13. Տարբեր կարծրության սև մատիտներով պատկերի՛ր սեղանին դրված առարկան:

Առաջադրանք 14. Կիրառելով գծապատման տարբեր տեսակները՝ գունավոր մատիտներով շարունակի՛ր բնանկարը:



Առաջադրանք 15. Գունավորի՛ր նատյուրմորտը:

Առաջադրանք 16. Կտրատի՛ր էջը նշված գծիկներով: Հաջորդ էջին փակցրո՛ւ նատյուրմորտի հատվածները:

Առաջադրանք 17. Հիշողությամբ վերականգնի՛ր նատյուրմորտը կամ ստացիր նոր պատկեր:
Յուրաքանչյուր կտորը փակցրո՛ւ համապատասխան կամ ցանկացած վանդակի մեջ:

Առաջադրանք 18. Ի՞նչ կենդանիների ուրվագծեր ես տեսնում:
Ասա՝ որոնք են ընտանի կենդանիներ, որոնք՝ վայրի:



Առաջադրանք 19. Յուրաքանչյուր կենդանին գունավորի՛ր համապատասխան գույնով:
Ասա՝ գույների միախառնումից ի՞նչ գույներ ստացար:



Առաջադրանք 20. Օգտվելով քայլաշարից՝ պատկերի՛ր վարդը և գունավորի՛ր:

1.



2.



3.



4.





Առաջադրանք 21. Էջը նշված հատվածից ծալի՛ր դեպի ներս, կտրիր գծիկներով նշված սափորի ուրվագիծը:
Բացիր ծալվածքը, ստացված դատարկ ուրվապատկերը ծածկիր գուաշի մեջ թաթախված սպունգով:



Առաջադրանք 22. Փակցրո՛ւ խնձորը սափորի ձախ հատվածում (Հավելված 2):
Շարունակի՛ր և ավարտի՛ր նատյուրմորտը:



Առաջադրանք 23. Եթե ժամացույցի թվերը համադրենք գունային շրջանի գույներին, ապա պատկերված ժամացույցը ցույց է տալիս ժամը 08:00 կամ 20:00, իսկ գունային արտահայտմամբ՝ կապույտ-դեղին:



1 = մուգ դեղին

2 = բաց նարնջագույն

3 = նարնջագույն

4 =կարմիր

5 = բաց մանուշակագույն

6 = մանուշակագույն

7 = մուգ կապույտ

8 = կապույտ

9 = երկնագույն

10 = կանաչ

11 = բաց կանաչ

12 = դեղին

Առաջադրանք 24. Ժամացույցը ցույց է տալիս ժամը 11:10 (23:10), կամ՝ բաց կանաչ-բաց նարնջագույն: Փակցրո՛ւ սլաքները համապատասխան տեղում (Հավելված 3):



Առաջադրանք 25. Դատարկ ժամատախտակի վրա նկարի՛ր երկնագույն-դեղին ժամը:
Ասա՛ նկարած ժամի թվային տարբերակը, որտեղ առաջին գույնը արտահայտում է փոքր սլաքի ցույց տված թիվը, իսկ երկրորդը՝ մեծ սլաքի ցույց տված թիվը:



Առաջադրանք 26. Դատարկ ժամատախտակի վրա նկարի՛ր սլաքներ այնպես, որ ժամացույցը ցույց տա «կանաչ-բաց նարնջագույն ժամը»: Ասա՛ նկարած ժամի թվային տարբերակը, որտեղ առաջին գույնը արտահայտում է փոքր սլաքի ցույց տված թիվը, իսկ երկրորդը՝ մեծ սլաքի ցույց տված թիվը:



Առաջադրանք 27. Ճանապարհային նշաններն օգնում են մեզ անվտանգ տեղաշարժվել:

Դրանք խոսում են մեզ հետ պատկերներով և գույներով:

Կարմիր լույս - նշանակում է պետք է կանգնել և սպասել:

Դեղին լույս - նշանակում է՝զգուշացի՛ր: Պետք է սկզբում նայել ձախ, ապա՝ աջ, նոր՝շարժվել:

Կանաչ լույս - նշանակում է անցնել կարելի է, կարողենք քայլել:

Ուղղանկյունների մեջ փակցրո՛ւ լուսացույցների լուսանկարները (Հավելված 4):

Առաջադրանք 28. Դատարկ հատվածները գունավորի՛ր համապատասխան գույնով:
Ասա՝ ո՞ր գույնը ի՞նչ է նշանակում:



ՈՃԱՎՈՐՈՒՄ

Առաջադրանք 29. Ուսումնասիրի՛ր, թե ինչպես կարելի է ոճավորել տերևները, և գունավորի՛ր:









Առաջադրանք 30. Ուսումնասիրի՛ր կեռասի ու տերևի ոճավորված տարբերակները և գունավորի՛ր:



Բնօրինակ



Կոր գծեր



Ուղիղ գծեր



Կոր և ուղիղ գծեր







Առաջադրանք 31. Ընդգծի՛ր կեռասները և գունավորիր զարդագոտին:





Առաջադրանք 32. Ընդգծի՛ր և գունավորի՛ր տերևով ոճավորված զարդանախշերը:





Առաջադրանք 33. Հաջորդաբար կրկնելով և պատկերի մեջ անընդհատ նոներ ավելացնելով՝ կստանանք բազմատեսակ ոճավորված զարդանախշեր: Գունավորիր ոճավորված նռան միջոցով ստեղծված զարդանախշերը:





Առաջադրանք 34. Ընդգծի՛ր և շարունակի՛ր ցանկապատը: Գունավորի՛ր բնանկարը:

Առաջադրանք 35. Ուսումնասիրի՛ր արևածաղկի ոճավորված տարբերակները:

Առաջադրանք 36. Փակցրո՛ւ արևածաղիկը ուղղանկյան մեջ (Հավելված 5):
Դեղին շրջանի մեջ պատկերի՛ր քեզ դուր եկած արևածաղիկը:





Առաջադրանք 37. Հավելվածից ընտրի՛ր և փակցրո՛ւ հոլանդացի գեղանկարիչ Վինսենթ վան Գոգի պատկերած արևածաղիկներից յուրաքանչյուրն իր տեղում (Հավելված 6):

Առաջադրանք 38. Նկարի՛ր քո արևածաղիկը:

Առաջադրանք 39. Ուսումնասիրի՛ր հայկական գորգերում օգտագործվող զարդանախշերը: ԱՐԾՎԱԳՈՐԳ

Առաջադրանք 40. Ուսումնասիրի՛ր հայկական գորգերում օգտագործվող զարդանախշերը: **ՎԻՇԱՊԱԳՈՐԳ**
Գունավորի՛ր համապատասխան գույներով:

Առաջադրանք 41. ԽԱՉԳՈՐԳԻ կողքը փակցրո՛ւ ԽՈՐԱՆԱԳՈՐԳԸ (Հավելված 7):

Առաջադրանք 42. Սև մատիտով միաժամանակ երկու ձեռքերով եզրագծի՛ր զարդանախշը: Կապույտ գծիկները եզրագծիր աջ ձեռքով, կարմիր գծիկները՝ ձախ: Գունավորի՛ր զարդանախշն ըստ օրինակի գույների:



Առաջադրանք 43. Ի՞նչ պատկերներ ես տեսնում ԾԱՂԿԱԽԱՁ գորգի զարդանախշերում:

Առաջադրանք 44. Դատարկ քառակուսիների մեջ փակցրո՛ւ գորգի համապատասխան նախշերը (Հավելված 8):
Մուգ կապույտ մատիտով գունավորի՛ր կենտրոնական խաչը՝ ամբողջացնելով ծաղկախաչ գորգը:

Առաջադրանք 45. Ընդգծի՛ր և գունավորի՛ր զարդանախշերը համապատասխան գույներով:





Առաջադրանք 46. Ուսումնասիրի՛ր զարդանախշ պատկերելու քայլերը:
Ներքևի հատվածում պատկերի՛ր զարդագոտի:







Առաջադրանք 47. Կրկնի՛ր կամ ստեղծի՛ր զարդանախշեր և գունավորիր գորգը:



Առաջադրանք 48. Գունավորի՛ր գորգը:



ՏԱՐԱԾԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ

Առաջադրանք 49. Հորիզոնն ունի չորս հիմնական կողմեր. հյուսիս, հարավ, արևելք, արևմուտք: Դեմքով դեպի հյուսիս կանգնելու դեպքում արևելքն աջ կողմում է, արևմուտքը՝ ձախ կողմում, իսկ հարավը՝ թիկունքում:

Առաջադրանք 50. Գունավորի՛ր գրատախտակը, որը գտնվում է դասարանի հյուսիսային կողմում, և արևմտյան պատը:
Դուռը, որը գտնվում է դասարանի արևելյան կողմում, ներկված է սպիտակ ներկով:
Ասա՝ ո՞ր կողմում են գտնվում ձեր դասարանի դուռը, գրատախտակը, պատուհանները:



Առաջադրանք 51. Բառերի ցանցի մեջ գտի՛ր հորիզոնի կողմերի անվանումները և գունավորի՛ր վանդակները:

գ	ա	ր	ու	ն	**հ**	**յ**	**ու**	**ս**	**ի**	**ս**	ձ	ի
ն	կ	ա	ր	կ	ա	ղ	ն	ի	գ	ի	ր	ք
ա	**ր**	**և**	**մ**	**ու**	**տ**	**ք**	բ	ա	զ	մ	ո	g
բ	ա	ժ	ա	կ	դ	ա	շ	ն	ա	մ	ու	ր
տ	ե	տ	ր	դ	ու	ռ	**ա**	**ր**	**և**	**ե**	**լ**	**ք**
ծ	ա	ղ	ի	կ	ա	թ	ո	ռ	գ	ր	ի	չ
կ	ա	տ	ու	տ	ե	ր	և	փ	ու	չ	ի	կ
ձ	**ու**	**կ**	**հ**	**ա**	**ր**	**ա**	**վ**	**ք**	**ա**	**ն**	**ո**	**ն**

Առաջադրանք 52. Լուծի՛ր խաչբառը: Գրի՛ր հորիզոնի մյուս կողմերի անվանումները:

		2		3		
1						
ա	ր	և	մ	ու	տ	ք

1 հարավ

2 արևելք

3 արևմուտք

Առաջադրանք 53. Ուսումնասիրի՛ր կողմնացույց պատկերելու քայլաշարը:

1. 

2. 

3. 

4. 

5.

6.

Առաջադրանք 54. Ընդգծի՛ր կողմնացույցը և գունավորի՛ր այն:



Առաջադրանք 55. Հիշողությամբ պատկերի՛ր ձեր բնակարանի հյուրասենյակի հյուսիսային պատը:

Առաջադրանք 56. Գունավորի՛ր աշակերտների նկարը և «օգնի՛ր նրանց մտնել դասարան»:
Գունավորի՛ր նշված վանդակից մեկ վանդակ դեպի վերև (հյուսիս), հետո՝ չորս վանդակ դեպի աջ (արևելք), ապա՝ չորս վանդակ՝ դեպի ներքև (հարավ) ուղղությամբ, և վերջում՝ չորս վանդակ դեպի ձախ (արևմուտք) ուղղությամբ:



ՆԱԽԱԳԻԾ
ՃՄՌԹԱԾ ԹՈՒՂԹԸ ՈՐՊԵՍ ԲՆԱՆԿԱՐԻ ԱՐՏԱՀԱՏՉԱՄԻՋՈՑ



Նախագծի նպատակն է զարգացնել սովորողների երևակայական մտածողությունը և դիտողականությունը: Աշխատանքն ընդգրկում է բնության ձևերի ուսումնասիրություն և ստեղծագործական պատկերման ունակությունների զարգացում:

Սովորողները դիտում են ճմռթած թուղթը, փորձում պատկերացնել այն որպես լեռնային ձև՝ ծալքերի ու ստվերների մեջ բացահայտելով նմանությունը սարերի պատկերին: Այդ դիտարկման հիման վրա նրանք ստեղծում են բնապատկեր՝ սարեր, դաշտ, անտառ և այլն: Առաջադրանքը խթանում է ստեղծագործական մտածողությունը, տեսածը թղթի հարթությանը վերարտադրելու կարողությունը:

Նախագիծն առաջարկում է նոր հայացք նյութի հնարավորություններին՝ խթանելով սովորողների՝ առօրյան վերաիմաստավորելու կարողությունները:

Առաջադրանք 1. Տարբեր ձևերով ճմռթի՛ր թուղթը և դիտարկի՛ր ստվերների խաղը:

Առաջադրանք 2. Դիտարկի՛ր թուղթը տարբեր կողմերից. ի՞նչ ես տեսնում՝ սարե՞ր, գագաթնե՞ր, ծալքե՞ր:
Ընտրիր այն դիտակետը, որտեղից թուղթն ամենաշատն է հիշեցնում սարեր կամ լեռնային տեսարան:



Առաջադրանք 3. Մատիտով ուրվագծի՛ր թղթի ձևերը՝ դիտարկելով այն որպես սար կամ լեռ:
Ընդգծի՛ր ստվերները և լուսավոր հատվածները, բարձունքներն ու խորությունները:

Առաջադրանք 4. Ուսումնասիրի՛ր կատարված աշխատանքի օրինակները:

Առաջադրանք 5. Ուսումնասիրի՛ր կատարված աշխատանքի օրինակները:





Առաջադրանք 6. Ուսումնասիրի՛ր ճմռթած թղթի միջոցով սար պատկերելու տարբերակները:



Առաջադրանք 7. Օգտվելով ճմռթած թղթից և հետևելով քայլաշարին՝ ստեղծի՛ր բնանկար:

Առաջադրանք 8. Գունավորի՛ր լանջերը տարբեր գույներով, օրինակ՝ գագաթը՝ կապույտ, խորը հատվածները՝մուգ կապույտ, գոգավորությունները՝ դեղին և կանաչ:



Առաջադրանք 9. Ավելացրո՛ւ ամպեր, սարեր, ծիածան, ծաղիկներ, ծառեր: Կարող ես նկարել մարդ, կենդանիներ և տներ:

ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԱՇԱՐ

1. **Ընտրիր ճիշտ տարբերակը:**

Ինչպե՞ս են կոչվում սև մատիտով արված նկարները.

Գունանկար ☐
Գծանկար ☐
Հեռանկար ☐
Կավճանկար ☐

2. **Լրացրո՛ւ դատարկ հատվածները:**

Կապույտի և դեղինի միախառնումից կստանանք _____

Կապույտի և կարմիրի միախառնումից կստանանք _____

3. **Գրի՛ր երկրաչափական պատկերների անունները:**







_____ _____ _____

4. **Սլաքով միացրո՛ւ իմաստային համընկնումները։**

Բնանկար	Նկար, որտեղ պատկերված է դեմք։
Դիմանկար	Նկար, որտեղ պատկերված է բնություն։
Նատյուրմորտ	Նկար, որտեղ պատկերված է ծով։
Ծովանկար	Նկար, որտեղ պատկերված են առարկաներ։

5. **Ընտրի՛ր ճիշտ տարբերակը։**

Ո՞ր գույները միախառնելով կստանանք նարնջագույն.

Կարմիր և կապույտ ☐
Կապույտ և դեղին ☐
Դեղին և կարմիր ☐
Կանաչ և կապույտ ☐

6. Ընդգծի՛ր և ասա՝ երկրաչափական ի՞նչ մարմիններ են պատկերված։





7. Գրի՛ր՝ ի՞նչ երկրաչափական մարմիններ գիտես։

_____

_____

_____

_____

_____

8. Ջրաներկի տուփի վրա նշի՛ր բոլոր տաք գույները:



9. Գրի՛ր հորիզոնի կողմերի անվանումները համապատասխան տեղերում:հ
Հյուսիսային սլաքը գունավորի՛ր կարմիր գույնով, հարավայինը՝կապույտ:
Գունավորի՛ր ամբողջ կողմնացույցը:



10. Նշի՛ր համապատասխան թիվը։

Ո՞րպատկերն է ավելորդ, եթե հաշվի առնենք.

- Գույնը 1 2 3 4 5
- Չևը 1 2 3 4 5
- Չափը 1 2 3 4 5
- Եզրագիծը 1 2 3 4 5



11. Ընտրի՛ր ճիշտ տարբերակը։

Ի՞նչ գույն պետք է խառնել կարմիրին, որպեսզի ստանանք նրա բաց երանգը.

Կապույտ ☐
Սպիտակ ☐
Դեղին ☐
Կանաչ ☐

12. Ընտրի՛ր ճիշտ տարբերակը։

Քանի՞ գույնունի ծիածանը.

Հինգ ☐
Վեց ☐
Յոթ ☐
Ութ ☐

13. Ընտրի՛ր ճիշտ տարբերակը։

Նշվածներից ո՞րն է համարվում բաղադրյալ գույն.

Կարմիր ☐
Կապույտ ☐
Դեղին ☐
Կանաչ ☐

14. Գունավորի՛ր երկրաչափական պատկերները՝

Երեք տարբեր հիմնական գույներով -



Երեք տարբեր բաղադրյալ գույներով -



15. Ընտրի՛ր ճիշտ տարբերակը։

Հայկական գորգի ոճավորման մեջ օգտագործվում են.

Փայտիկներ ☐
Ապակիներ ☐
Զարդանախշեր ☐
Նոտաներ ☐

16. Սլաքով միացրո՛ւ համընկնումները։

Ուրվագիծ

Ուրվապատկեր



ՈՒՍՈՒՑՉԻ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ (ամփոփում)

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

1.



2.



3.



4.



5.

6.

7.

8.

Սարգսյան Ս. Մ., Պետրոսյան Ս. Ս.

ԿԵՐՊԱՐՎԵՍՏ 4

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐ

Հանրակրթական ուսումնական հաստատությունների

չորրորդ դասարանի սովորողների համար

Տպագրությունը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 200:
Տպագրված է «Էդիթ Պրինտ» հրատարակչությունում,
Երևան, Դ.Մալյան 43